



ՄԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱՐԹԻ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3905

ՄԱՐԱԹԱԹԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ. Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրները դրկելու է առ մատակարարութիւն Որեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Աղգային Տեսութիւն. Արդի կացութիւնը: Իւնգֆրու. (ԼԵՌԵՆՅ). Օսմ. նախկին վարչական դրութիւն. (Մ. ԶՕՀՐԱՊ). Յուշիկք Բիւթանականք. Արկոտերէնն ու գաւառաբարձաւ. (Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ). Զմայրութիւն. (ՄԻՈՒԱ). Վէպ. Հայաստանի բարքեր. Սեռակ և Սոսուն, Բընութեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ). Բաղրամ Դարաթական Լրոց. Արտաբէն, Ներքին, Աղգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀԻՆԳՇԱՐԹԻ 31 ԴԵԿՏ.

ԱՂԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Շաբթուս կարեւորագոյն եւ գոհացուցիչ դէպքն է նոր Քաղաքական ժողովոյ վաւերացումն, որում ակնհայտ կ'ապաստուէր բաւական ժամանակէ հետո՛ւ եւ որ այս կերպիւ կուգայ բաւական փոխել աղգային գործոց արդի անկերպարան վիճակը: Քաղաքական ժողովոյ վաւերացման այսպէս յապաղումն ընդհանուր զարմանք պատճառած էր, որովհետեւ նորա ընտրութիւնը կատարուած էր աղգային օրինաց որոշ սահմանին մէջ եւ նորա բոլոր անդամներն ալ իրենց օրինասէր եւ տիրասէր զգացմանց հաւաստին բազմիցս տուած են Օսմ. կառավարութեան. դո՛ւ հենք որ այս յապաղման առիթ տուող թիւրիմացութիւնները վերջապէս բարձուելով, աղգային գործոց գլուխ կ'անցնի մարմին մը ոյր պական այնքան զգալի կը լինէր արդի չիլիթ եւ տաքնապալի կացութեան մէջ:

Քաղաքական ժողովոյ վաւերացմամբ կը վերնայ Պատրիարքական հրաժարման առիթ տուող երեք պատճառներէ մին. Մնացեալ պատճառներէն, Շահապալեան խնդիրն, որ ատեն մը այնքան աղմուկ յարոյց ինքնին լուծուեցաւ, յայտնի է թէ ինչ

Վերադարձ. Իզմիրի առաջնորդը վերջապէս ստիպուեցաւ տեղի տալ հանրային կարծեաց սաստկութեան առջեւ, եւ իւր հրաժարմամբ վերջ տուաւ կեդրոնին եւ Իզմիրի միջեւ պառակտեալ կացութեան մը որ ամեն հայու զգացումները կը վերաւորէր: Իզմիրի հայոց մեծամասնութիւնը, գովելի լըրջմտութեամբ եւ օրինասիրութեամբ, իւր ցոյցերով յայտնեց թէ ո՛րքան եպերելի կը գտնէ այդ վարմունքն, եւ այսօր նախկին բարուք յարաբերութիւնները վերահաստատուած են կեդրոնին եւ Իզմիրի Հայոց մէջտեղ:

Պատրիարքական հրաժարման պատճառ եղող խնդրոց երրորդ խնդիրն է Զուլիչ Տիգրանի ժառանգութեան խնդիրը: Միայն թէ այդ խնդիր որքան ալ աղգային է, նոյնքան ալ կը վերաբերի բոլոր քրիստոնէից: Ամուսնական օրինաց այդ պարագայն բոլոր քրիստոնէից ալ յատուկ է, եւ վաղէմբ առանձնաշնորհումներով նուիրագործեալ: Վստահ ենք թէ Կայս. կառավարութիւնն իւր հանրածանօթ իմաստութեամբ ժամ առաջ կը փութայ Պատրիարքարանի նպատակը կերպով կարգադրել այս խնդիրն ալ, այսու միանգամ ընդ միշտ փայլուն ապացոյց մը տալով այն հոգածութեան որով կը կարգադրէ իրաւաբանական խնդիրները:

Նոր Քաղ. ժողովն ահա կ'անցնի իւր պաշտօնի գլուխն: Արդի տաքնապալի պարագայներէն յետոյ իրաւունք ունինք շատ ինչ պահանջելու իրմէ: Նոր Քաղաքական ժողովոյ անդամներն աղգային կենաց փորձառութիւնն ունին իրենց երկարատեւ գործունէութեամբ աղգային շրջանակին մէջ, եւ պիտի փութան անշուշտ զարկ մը տալ աղգային գործոց կայուն ընթացքին: Նոր Քաղաքական ժողովոյ գլխաւոր ջանքերէն մին լինելու է ներքին խնդրովք զբաղիլ, եւ իւր գլխաւոր ուշն ու ուրուշը դարձնել մեր կենսական պէտքերուն: Մասնաւորապէս ջանալու է փարատել այս կասկածն եւ անվստահութիւնը զոր զբաւարտիչը ոմանք զարթուցած են Կայս. կառավարութեան մէջ ի մասին մեր հանրային գործունէութեան, եւ ցոյց տալ թէ Հայ ազգն իւր բոլոր սխտորից լրացումը կսպասէ լոկ Օսմ. Կայսերական կառավարութեան արդարասիրութենէն: Այս կերպիւ նոր Քաղաքական ժողովը պիտի արդարացնէ այն յոյսեր որք յամենուտ դրուած են իւր վրայ:

ԻՒՆԳՖՐԱՌԻ*)

Նա այն տեղ է՝ երկնի գրկում վեհ, վիթխարի ու հըսարտ, իր կուսական սպիտակ գգեստում Հրաշալի եւ սննդաբոյ: Ո՛չ ծանրագին տրտմութիւնը, Ո՛չ մոլերը դառնաւէտ, Ո՛չ երկնքի բարկութիւնը, Ոչինչ, ոչինչ իսկ յաւէտ Ձէ կարենում պարզ ճակատը Նըսեմացնել, կնճռոտել: Ողջ բնութիւնն է նրա նաժիշտը. ժայռերը, որ անարգել Սկայ խոնուած են նրա բոլորքով, Իրենց սուր-սուր, վէս ծայրերով, Իրենց խորհող ճակատներով եւ մտական արցունքներով, Լինին իբրեւ սիրահարներ, Որ ջերմ սէր են պաղատում: Արեգակի փայլ ճաճանչներ Նըրան անզօր են թըւում, Սոճ-եղեւնէ՛ պերճ անտառներ Նրա ոտներն են համբուրում... Բայց միշտ դէպ զրանց նա անտարբեր՝ Անմատչելի է մընում: Սակայն երբեմն գիշեր ժամին Նա սպասում է գաղտ գողով Որպէս սիրածն աղու լուսին, Իր վերայից անցնելով, Պիտի շոյէ իրեն գորով, Վառ աստղներ ծագեցնելով Իր գեղ գլխին՝ իբր պսակ, Եւ ձիգ, քնքոյ մի նայեացով Սըրճէ մրմուռ սիրունակ... Եւ կոյնն որբան ձիգ ու երկար Լուսինն հմայուած է դիտում, Լի սիրային մի խաղաղագ Զգացումով՝ նրան հետեւում: Սակայն, աւա՛ղ, լուսինն մուսուռն Անում սովոր իր ընթացք: Ձկա՛յ նրա համար կոյսը սիրուն, Ձկա՛յ նրա համար կոյսի նաչխուն, Սիրակարօտ, նուրբ նայուածք: Իւ ահա դէպ լուսադէմին Կոյսը դէմքն իր շքնաղ Պատում՝ քողով փափուկ ամալին, Եւ մէ՛ն մնացած այն թաղաղ Անապատում բարձր երկնի, Նա լուռ, մտախոհ, տխրունակ Իր մէնութեան վրայ դառնալի Լալիս երկար ժամանակ:

ԼԵՌԵՆՅ

*) Զուլիցերիայում Ալպեան լեռների միջին-ձիւնապատ շղթայի մի լեռան անունն է այդ, որ թարգմանորէն նշանակում է՝ կոյս:

ՕՍՍ. ՆԱԽԿԻՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Յայտնի է թէ Օսմանեան կայսրութեան հաստատութեան ժամանակ, Սուլթան Օսմանի օրով, վեզարէթի (Մեծ-Եպարքոսութիւն) պաշտօնն զոյութիւն չունէր. կառավարութեան գործոց բարձրագոյն տնօրէնութիւնն ի ձեռին ունէր զահաժառանգ իշխանն որ փոխանորդաբար կը վարէր զայն: Բայց յետ մահուան առաջին ինքնակալին, Նորին Բարձրութիւնն իւր յաջորդութեան իրաւունքներէն հրաժարելով, Սուլթան Օրխան իւր զահակալութեանն առթիւ զնա իւր պաշտօնին մէջ հաստատելով նաեւ Վեզիր պատուանունն ընծայեց նա: Վեզարէթի ծագման նկատմամբ այս հակիրճ ծանօթութիւնը կարծեմք բուական կը բացատրէ այն ամենաբարձր նշանակութիւնն որ իբր Օսմանեան կայսրութեան գրեթէ միահեծան ներկայացուցիչ, վեզարէթի պաշտօնն ըստաղա ի սկզբանէ անտի: Մեծ-Եպարքոսն որ ի նշան իւր բարձր պաշտաման ի ձեռին ունէր երբեմն կայսերական մատանին, բնականապէս իբր Նորին Վեհափառութեան փոխանութիւնը վայելող բարձրագոյն պաշտօնատար մը, երբեմն տարիներով կը վարէր զայդ պաշտօնն և Օսմանեան կայսրութեան հաստատութեան օրերն, « Գուպէ աթը վեզիրէրի » կոչուած պաշտօնեայներէն կարգաւ կ'ընտրուէր: Սակայն այդ պաշտօն Սուլթան Ահմէտ Գ. ի ձեռք ջնջուելէ յետոյ, ընդհանրապէս թէ' աստ եւ թէ ի գաւառս գլխունով բարձրագոյն պաշտօնեայք առանց բացառութեան Մեծ-Եպարքոսութեան պաշտօնին կոչուիլ սկսան. իսկ ի բաց առեալ Շէյխ-իւլ-Իսլամութեան եւ այլ մի քանի բարձրագոյն պաշտօններ, Օսմանեան պաշտօնէութեանց բաշխումն ընդհանրապէս Մեծ-Եպարքոսութեան հրամանաւ տեղի կ'ունենար. եւ այդ առթիւ, ըստ աստիճանի ընտրելոյն, նուէր կը տրուէր նաեւ մուշտակ կամ խափտան որ չորս աստիճանի կը բաժնուէր:

Մեծ-Եպարքոսն ի սկզբան իրեն ազարանը կը նստէր եւ ոչ ի Բ. Դուռն. իսկ աւագանին տէրութեան որ ի Բ. Դուռն, կը բաղ'անար երեք բարձրագոյն եւ վեց ստորագասեալ պաշտօնեայներէ, որք ամեն տարւոյ վերջը Նորին Բարձրութեան Մեծ-Եպարքոսին հրամանաւ կ'արձակուէին կամ կը կոչուէին ի պաշտօն. այս ինն պաշտօնատարք Օսմանեան տէրութեան պաշտօնատարութեան շարքին մէջ կը կազմէին որոշ կարգ մը որ Գարու բիճալը կ'ըսուէր:

Քէտ-Խիւտա պէյ, Բէիս-իւլ-Քիւթիւ պէյ, Քէիւտի և Չափուշ-Պաշը, ահա երեք բարձրագոյն պաշտօնատարք որոց պարտականութեանց ընդհանուր առմամբ կը համապատասխանեն ներկայ դրութեամբ հաստատուել նախարարութիւնը:

Քէտ-Խիւտա Պէյն կամ որ նոյն է Վեզիր-Քէտ-Խիւտաը կը համապատասխանէ այժմու Ստորէթ Միւսթէշարըի և պատերազմական ու ներքին գործոց պատանէից: Նա ի մասնաւորի կը հսկէր կարեւոր պաշտօնագրաց խմբագրութեան գործին և ընդհանրապէս մեծ Եպարքոսութեան ներկայացեալ գործերն իրենց յատուկ տեղերն յանձնարարելու և ի հարկին նախարարաց խորհրդոյ մէջ Մեծ Եպարքոսին փոխանորդելու պաշտօններն ալ կը վարէր:

Բէիս-իւլ-Քիւթիւ պէյ և Քէիւտի որ պար-

զապէս Բէիս-էֆէնտի ալ կ'ըսուէր, արտաքին գործոց պաշտօնին հետ ի միասին կը վարէր նաեւ Նորին վեհափառութեան ներկայանալիք թղթոց խմբագրութեան փափուկ պաշտօնն: Նորին վեհափառութեան տրամադրութեան ներքեւ կը գտնուէին Տիվան-թէրմանը, Պէյլիկճի և Քէիւտի, և Ամէտճի և Քէիւտի:

Չափուշ-Պաշըն նախարարական խորհրդոյ մէջ մեծ Եպարքոսի թէ' իբր փոխանորդ և թէ' իբր օգնական զանազան պարտականութիւններ ունէր. Նա կ'ընդունէր անձնական գործոց առթիւ մեծ Եպարքոսին աղերսագիր տուողներն և նոցա ներկայած թղթերն համառօտագրելով կը զըրկէր առ որ անկէ: Չափուշ Պաշըն կը վարէր նաեւ այն պաշտօնն որ այսօր ոստիկանութեան յատուկ է. նա ի գործ կը դընէր դատարաններէ տրուած վճարներն եւ Մեծ-Եպարքոսութեան եկած հրամանները: Պէտք է յաւելուլ սակայն թէ, ի զէպ բանտարկութեան, իբր ոստիկանութեան պաշտօնեայ նորա իրաւասութիւնը չէր տարածուեր իրմէ բարձրագոյն պաշտօնէից վրայ: Չափուշ-Պաշըն իբր կարգադիր իշխանութիւն իւր տրամադրութեան ներքեւ ունէր 600ի չափ Չափուշ եւ երեք ոստիկանապետք Մուհար-Աղա, Էսաս-Պաշը եւ Սու-Պաշը: Իբր արարողապետ նորա պաշտօնն էր առաջնորդել դեսպանաց մինչեւ յոտս կայսերական գահոյից եւ պաշտօնական օրերն կայսերական պալատան դռնապետին հետ, որ երբեմն կարեւոր պաշտօն մ'էր, Մեծ-Եպարքոսին առջեւէն կ'ընթանար մինչեւ կայսերական մեծ դահլիճն, արձաթեայ աստ ի ձեռին: Չափուշ-Պաշըն նաեւ գաւառները զրկուած հրամանաց առաքման գործոյն իբր տեսուչ, իւր տրամադրութեան ներքեւ ունէր 200ի չափ թղթատարներ կէտիքի-Չափուշ եւ այս առթիւ թերեւս կրնայ նկատուիլ նա իբր տեսուչ թղթատարութեան:

Գափու-Բիճալը կոչուած պաշտօնատարաց կարգը կ'ամբողջանէն հետեւեալ վեց պաշտօնատարք. Պէօլիւք-թէգէթէրճի, Քիւլ-ճիւք-թէգէթէրճի, Ստատթէթ-մէթթուպ-ճուսը, Թէշրիֆթճը, Պէյլիկճի եւ Քէթ-Խիւտա-քէթիպի:

Անոնք որ տեղեակ են Օսմանեան կայսրութեան անցելոյն, գիտեն թէ կայսրութեան ելմտական վարչութիւնն, իւր տեսակին մէջ եւրոպական վարչութեանց լաւագոյններէն մին էր երբեմն. եւ երբ յիշենք թէ եկած են օրեր՝ երբ նոյն իսկ կայսրութեան այսօրուան պահանջատէրերն Օսմանեան կայս. գահաձուլ օգնութեան դիմած են, կարծենք թէ այդ վարչութեան արժանեաց նկատմամբ բաւական գաղափար մը տուած կ'ըլլանք:

Օսմանեան ելմտական վարչութեան բուն պետն՝ արդեամբ Մեծ-Եպարքոսն եղած է երբեմն. թէեւ վարչութեան այդ ճիւղին համար յատուկ պաշտօնեայ մ'ունենալու դրութիւնն ի սկզբանէ անտի ընդունուած էր, բայց եւ այնպէս այդ պաշտօնեայք, որպէս զիտելի է արդէն վարչութեան միւս ճիւղերուն մէջ, աւելի ստորագասեալ եւ գործադիր եղած են քան թէ ձեռնհասութեան տէր:

Այս իրողութիւնն կը հաստատուի այնու նաեւ թէ, տէֆտէրատարութիւնն՝ որպէս կը կոչուէր երբեմն ելմտական գործոց պաշտօնէութիւնն, ի սղբան մէկ եւ Սուլթան Պայազիտ Բ. օրով, Անատուլու տէֆտէրատարը եւ Բումէլի-տէֆտէրատարը անուամբ

երկու անձանց միանգամայն յանձնուելէ յետոյ, Սուլթան Սէլիմ Բ. եւ Սուլթան Մուրատ Գ. ժամանակ, էյպէթի դրութեան գործադրութեանն առթիւ, անոնց թիւը բազմացաւ. թէեւ ի վերջոյ երեք տէֆտէրատար միայն մնացին:

Տէֆտէրատար չըբըր էվլէլ որպէս կը կոչուէր առաջին տէֆտէրատարն, թէեւ կը նկատուէր իբր պաշտօնեայ ելեւմտից սակայն առանց մեծ Եպարքոսին հրամանին որ եւ է վճարուելու ձեռնահաճութիւն չ'ունէր եւ նոյն իսկ իւր յանձնարարներն, Միրի թէսթէրճի, Հեվալէնամէ և, առանց մեծ-Եպարքոսին կնքոյն անընդունելի կը նկատուէին: Կայսրութեան ելեւմտական գործոց բարեւը մատակարարութիւնն այն աստիճան աւագ կարեւորութիւն մը ստացած էր որ չարաթը մի անգամ արքունի գահաձուլ հաշուեկիւիւր մեծ Եպարքոսին ներկայացնելն արդէն ընդունուած սովորութիւն մ'էր:

Տէֆտէրատար չըբըր էվլէլի մէկ մասնաւոր պաշտօնն ալ Պոսոյ մէջ գտնուող Նիլիերիներու ամսական վճարման գործն էր որ, ինչպէս յայտնի է, շատ դիւրին գործ մը չ'էր:

Տէֆտէրատար չըբըր սանիի պաշտօնն էր, մաքսային հասութիւն վարչութիւնն զոր հաստատեց Սուլթան Սէլիմ Գ.:

Տէֆտէրատար չըբըր սալիսի յանձնուած էր մայրաքաղաքի պարենաւորման հսկելու հոգն, եւ անշուշտ այս պատճառաւ էր որ զանի Հուպուպաթ նազըրը ալ կ'անուանէին:

Գալով Տէֆտէրատար Գափուսի երկրորդական պաշտօնատարաց, ասոնք կը կոչուէին պաշ-պագը գուլը, ընդհանուր հաւաքիչ, ճիւղից պաշը պագը գուլը, որ մասնաւորապէս խտրած ըսուած տրոց գահաձուլ պաշտօնն ունէր եւ վեղէնտար պաշը, Սէրկի նազըրը եւ վերջապէս Միրի քէթիպի անուամբ դատաւոր մը որ վարչութեան հետ եղած դատերն կը տեսնէր:

Այս յօդուածն աւարտելէ առաջ, աւելորդ չէ նաեւ երկու խօսք պալատական պաշտամանց վրայ, Մէնամալի խապա, եւ համառօտել աստ գոնէ այն պաշտօններ որք երբեմն քաղաքային իշխանութեան գոյներ առնելով հանրային կարեւորութիւն մ'ունեցած են:

Այս կարգէն էր ահա Միրի-իւլ որ գաւառները գացող պաշտօնէից կը յանձնէր իւր եւ թուղ ի նշան զինուորական իշխանութեան: Նոյն կարգին մէջ պէտք է յիշենք նաեւ այն պաշտօնատար որ Պոթանճը-Պաշը կը կոչուէր եւ որ հանրածանօթ է իւր պաշտօնին պատճառաւ: Պոթանճը-Պաշըն արքունի պալատանց վերատեսչութեան պաշտօնէն ի դատ, կը հսկէր՝ նաեւ վերին Վափորէն մինչեւ ի Տարտանէլ տարածուող ծովեզերաց պահպանութեան. ուստի եւ այդ եզերաց վրայ տեղի ունենալիք շինութեանց համար պէտք եղած արտօնութիւնը Պոթանճը-Պաշըն միայն կուտար. նոյնպէս եւ թերեւս բնական հետեւութեամբ մը, մայրաքաղաքին մէջ եւ ի շրջակայ շրջուր եւ օրսորդութեան հսկողութեան պաշտօնն ունէր նա. բայց ընթերցողը անշուշտ ո' եւ է առնչութիւն մը չը պիտի գտնեն ընդ մէջ յիշեալ պաշտամանց եւ այն հսկողութեան իրաւասութեան զոր Պոթանճը-Պաշըն կերի եւ գինիի առեւտրոյն վրայ ի գործ կը դնէր: Հոս չը վերջանար սակայն Պոթանճը-Պաշըի պաշտօնն, եւ ինչ որ երբեմն անհամեմատա-

ւելի հանրածանօթ ըրած էր զինքն՝ մեծ բանտին դահճապետի և բանտապետի պաշտօնն էր անշուշտ որ ի հարկէ սոսկում կ'ազդէր հասարակութեան, ըստ որում պետական ոճիրներու պատիժը, բարձրագոյն պաշտօնատարաց բանտարկութիւնը և մասնաւոր գլխատուութիւնը նորա ձեռքը ի գործ կը դրուէին: Եւ երբ յիշենք թէ Պօսթան-ճը-Պաշըն հազիւ երբեք տեսանելի էր հասարակութեան և թէ պաշտօնատարաց հետ ունեցած գործերն ստիպուած էր գիշերով կարգադրելու, յայնժամ կատարեալ տիպար մը կ'ունենանք տեսակ մը առեղծուածային անձնաւորութեան որ ինչպէս ըսինք, բոլորովին զուրկ չէր սոսկումէ: Եւ հաւաստի ինչ որ էր Պօսթանճը-Պաշըն յաջո հասարակութեան:

Շէհիր-է-մինի որոյ պաշտօնը փութանք ըսել թէ, ամենեւին չը համապատասխանէր այսօրուան նոյն անուամբ ծանօթ քաղաքապետի պաշտօնին: Սոյն անուամբ պէտք էր հասկնալ երբեմն կայսերական շինուածոց ընդհանուր վերատեսչի պաշտօնն:

Պաշտատական պաշտօնէից կարգին մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի են նաեւ Քարա-աղալար պաշը որ սովորաբար Քըզլար-աղասը ալ կ'ըսուի, և Ագ-աղալար պաշը կամ Գարու-աղասը:

Քըզլար-աղասըի պաշտօնին բարձրութիւնն և ազդեցութիւնն այսօր իսկ յայտնի է ըստ ինքեան: Ինչ որ պէտք է գիտնալ աստ ի մասնաւորի այն է թէ, երբեմն Քըզլար-աղասըի պաշտօնը կառավարական գործոց մէջ ունեցած է ազդեցիկ դեր մը արժանի յիշատակութեան, զոր ըմբռնելու համար բաւական է միայն ըսել թէ, Նորին կայսերական Վահանաութեան եւ Մեծ-Ճարքըսին միջեւ եղած բանակցութիւնը յիշեալ Պաշ-աղային միջոցաւ տեղի կ'ունենային երբեմն: Փափուկ պաշտօն մը որ ի հարկէ մեծ ճարտարութիւն կը պահանջէր:

Քըզլար-աղասին որ երբեմն Մեծ-Եպարքոսէն եւ Շէյխ-իւլ-Իսլամէն անմիջապէս ետքը կուգար, նաեւ մայրաքաղաքին ազօթատեղեաց յատկացեալ վազըֆներու վերին հսկողութեան պաշտօնն ունէր եւ կը համարուէր իրրեւ պետն այն պաշտատական պաշտօնէից՝ որք Պալթամը անուամբ կը յիշուին տակաւին:

Ագ-աղալար-պաշըն կամ Գարու-աղասըն ունէր արքունի պաշտատն դռնապետի պաշտօնն որ սակայն ժամանակ մը Քըզլար-աղասին իսկ նախամեծար համարուելու չափ կարեւորութիւն ունեցած է:

Մ. ԶՕՀԲԱՊ

բէն առնելով՝ անցնի անոր տեղն եւ վերջինը նորա յաջորդէ:

Մըկալցնել. — Բանի մը կամ մէկու մը կարօտովը մէկը մաշեցնել, կամ մէկու մը կամ բանէ մը հաբէթ քաշել տալ:

Յուրտուլուլի է. — Օգը շատ պաշ է:

Յըխցըլ. — Թափթփած:

Մըզլըզալ. — Յրտէն ասեղնատիւ: Յուրտէն մատներս ասեղնադրեցին:

Ճինկէն. — Բոլա. — Գնչու. — Վանեցիք ճըրըջ կ'ըսեն: Ճինկէններն եկեր են ձարմաղ, շարմաղ, սարաւ բերած են ծախելու:

Մըթեխ. — Մոծակ, սիւրիսինէլ:

Իլ. Աղըրչակ. — Բողման. — Բամալակ ոլորելու գործիներ:

Փաշալու. — Բարեկենդանի դիմակաւոր:

Թըսվըռալ. — Ընը՝ ընը՝ լալ:

Տաքուլ ընել. — Մսած երախայն ջեռուցանել:

Սուսուլնալ. — Նիհարնալ:

Տան վրայ տռնել. — Տընիբեսայ առնուլ:

Լէկլիկ. — Խախուտ. — Վանեցիք լախլախ կ'ըսեն: Լէկլիկ հեծեր՝ կ'երթայ:

Ախ-կալ. — Մանրուած կալ, ըստ վանեցոց խայան:

Օձու-ձագ. — Ձէրքէզի լամուկ:

Տալան-տեղ. — Քարոտ, կամ ամրացած պինդ հող. — ըստ Հայաստանցոց՝ կոռթ, կոշտ կամ կոշտ:

Ճիտը-իշնալ. — Մեռելի տունն երթալով կանայք՝ գլուխին աստ և անդ երեքցնել:

Ճութ. Ճըթիկ. (Թերեւս ճիւղի աղաւաղումը). — Խաղողին ողկոյգէն մաս մը, զորօրինակ, Ճըթիկ մը խաղող է:

Ձըզըզլիկ. — Չարչարել. — Վանեցիք լըճիկ:

Խնամի-ըրաքըսը. — Կանոնչ օղի:

Ագճա-տանձ. — Ահճէ արմուտ:

Ձէլէպի-եաղը. — Գերազնիւ ձէթ, Թորպա եաղը:

Անկ. — Կանթ, անկղ, խուլի:

Ճըպուլցնել. — Խաղցնել:

Անձրեւ կը մըծայ. — Անձրեւ կը վըծայ. — Երբ անձրեւն մերթ ընդ մերթ թեթեւ մը կուգայ, այսինքն, անձրեւին սին սին կաթկըթելը:

Յըխցըլսել. — Քաշքշել, օձիքը թոթուել՝ բարոյապէս թէ՛ նիւթապէս, իւրն անխցի իմաստն ունի:

Ճաթ. — Մտալիւրով թրուած անուշեղէն մը, որուն ներքեւն ամառը թութի եւ ձմեռը՝ չաղանակի տերեւ կը գնեն եւ կ'փեն:

Տղասկան. — Երախային մօրը՝ քառսունքի մէջ եղած օրերը:

Տղասգանի երթալ. — Աչքի լուսի գալ. — Սովորութիւն է նորածին երախային փեթէ մը շինել տանիլ:

Պատտակ. — Հէնքի չաթալ:

Եղուընակ. — Գործուելու հէնքին թեւերը զատելու համար ի կիր առնուած ճըղակ կամ երկճղի փայտը:

Անվուլայ-միս. — Անիւղ միս կամ կերակուր. — Ըստ Հայաստանցոց անխառն:

Շինիկ. — (Տէրութեան չափ ցորենույ և արմտեաց). — հինգ օխայի չափ մը, այսինքն բիւլին չորրորդ մասը:

Այրիւշիկ. — չափ մը:

Փինթէր. — Երկու կէրիւշիկ՝ մէկ փինթէր է, այսինքն, բիւլին 1/8 մասը:

Հախընիկ. — Չորս փինթէրը մէկ հախընիկ է:

Քիլէկ. — Չորս հախընիկը՝ մէկ քիլէկ է:

Պէգ. (Միկան աղըրչակ). — Վէգ, աչք. — Վանեցիք ճան կ'ըսեն: Բուն բարեկենդանի երեկոյին Վիթանացիք պէգ կը խաղան: Պէգին աջ կողմը փաշա կը յորջորջեն, ձախակողմը՝ փաշ, երրորդ դէմքը՝ պէյ, իսկ չորրորդին՝ Բաւը կը կոչեն, և այս անթիւնը, զորօր. «Հըրսըզ հըրսըզ թութ» տուն՝ պաղլատըն, պէյին պէյին պէյնի թութ տունն է:

Ոչնիկ եղաւ. — կըզլըտուիլ:

Մործակ. — Մոծրակ. — ըստ Վանեցոց պճոճակ կամ պոճոճակ:

Խաշափերտ. — Խեչաքար, չեղանօզ:

Թանդեր է. — Փառցեր է, սառեր է. — ըստ Վանեցոց՝ փեթանալ:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Զ Մ Ա Յ Լ Ո Ւ Մ Ն Ե Ր

Որպէս ամէն իր եւ առարկայ՝ իւր անուն, որպէս ամէն դէմք՝ իւր գծեր, նոյնպէս եւ ամէն տեսարան՝ իւր տպաւորութիւնն ու ներշնչումն ունի:

Տեսարանաց օրտաշարժին եւ հոգեյոյզին հանդէպ ենք:

Աշուն է: Եղանակաց տխրագոյնն եւ արտասուագոյնն է: Բնութիւնն համայն՝ հանգոյն լալահաւաչ և սգաւեր օրեւայրոյ, իւր փթթինազարդ գարնան եւ հնձաւէտ ամրան՝ իրրեւ իւր ջուլտ մի սիրականաց գերեզմաններու վերայ, կը հեծեծէ, հիւսիսի քամեաց մեռնչին հետ, Սեւ ծովու փրփրերախ կոհակաց շառաչիւնին հետ: Վարսագեղ եւ ծառաւէտ անտառն զիրկ է իւր մեղամաղձոտ ու խորհրդաւոր ստուերաց շքէն ու շնորհքէն: Լռած է սոխակն՝ պուրակին ի ծոց, Թոռմած է վարդն, իւր ազաղուն ծղօտին վրայ: Որեւն այլ եւս թօնուտ ամալոց մէջէն՝ բրբաղգեցիկ և ծիրանեփայլ շողալէ գաղթած, սգապատ հոգւոյ մի հանգէտ, մառախուղն իրեն դիմաց քողը ձգած, բնութեան դագաղին ետեւէն գնացող յուշարկաւորի մը պէս՝ կը քալէ մեր գլխին եւ երկնից վերեւէն: Ուր ուրեք եւ նետես ակնարկդ եւ առնուս քայլդ, կայլակ մ'աւելի արցունք, հեծկլտանք մ'աւելի թախիծ կը տեսնես: Ամպադրացի սարք՝ որք էր երբեմն ծիրանաներկ եւ ոսկեզօծ կը շողոյէին, զարդիս միգամած եւ տխրաշուք են:

Աշունն՝ բնութեան գերեզմանն է արդարեւ, ուր կը մեռնին եւ կը թաղուին գարունն ու ամառն, այլ երկնառաք հոգիներու նման, մի օր, անտի եւ եւս կանանչագեղ եւ ոսկեգիսակ յառնելու համար: Որպէս դիակն կ'իջնէ ի հող, անդ հոգին հրեշտակի փոխուելու եւ յերկինս առնուած թռչելու եւ անմահանալու համար, այսպէս եւ բնութիւնն՝ աշնան մէջ, կը թոռմի, կը մեռնի եւս առաւել կրկնապէս եւ գեղակայտաւ յառնելու համար մի օր: Որպէս ժպիտն՝ արցունքին, ծիածանն՝ անձրեւին, զեփիւռը՝ փոթորկին, ճառագայթն՝ ամպին, այնպէս եւ գարունը կը յաջորդէ աշնան, Քերգողը՝ իրենց ծաղկափթիթ օճաղն եւ իրենց փոխարեան լեզուա կ'ըսեն թէ՛ բնութիւնն աշնան մէջ կը մեռնի, մինչդեռ բնութիւնն՝ անդ կ'երկնէ: Թողունք բնութեան երկնել եւ հանդերձել մեզ, նոր Ապրիլին եւ նոր Մայիսին

ՅՈՒՇԻԿՔ ԲԻԻԹԱՆԱԿԱՆՔ

ԱՐԿՈՏԵՐԷՆՆ ՈՒ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌ

Թուր-խաղալ. — «Գարնալալ» ի գրօսանք մ'է. գոտիին ծայրը կը կապեն, գունտ կ'ընեն, եւ բոլորակ կազմելով գիւղացիք՝ կեդրոնը մէկը կը նստեցնեն, որոյ քամակին պարբերաբար զարնելով՝ «Կէլտի» կիթտի առնիլըզալ, կէնէ՛ կէլտի տընիլըզալ» ըսելով՝ մէջ տեղը նստողին շարունակ կը զարնեն ու կը զարնեն կապոցին գնտիկովըն, եւ ձեռքէ ձեռք իրարու կուտան, մինչեւ որ կեդրոնանիստ - գնտակահարն՝ զնտիկին որոյ քով կենալն գտնէ, եւ ձեռ-

մէջ, մեզ նոր դարուն, եւ նոր Յուլիոն եւ նոր Օգոստոսին մէջ՝ նոր ամառն, եւ մենք անցնինք, աշնան եղանակին ցոյց տը- ուած մեզ ամենեցունցս ծանօթ մէկ դէմքն հիւրներէ կամ տխրազններէ:

Մ Օ Տ Ա Ն

Մօտան դնացի անցեալ օր, որ՝ աշնան մէջ ծաղկոտ եւ ամրան ծիծաղկոտ օրերէն գողցուած տիւերէն միոյն պատշէկն էր: Մօտան՝ ՄՕՏԱՆ (նորածեւեռութիւնն) անցած երեւոյթի կամ զարդարումի մի հանգա- մանքն էր գգեցած: Տերեւն ու ծաղիկ՝ որք երբեմն նորա սաղարթագեղ եւ խնկաբոյր ծառաստանեաց խառնուրդի ու խորտիկ զգեստներն կը յօրինէին, որպէս թախն ու սնդուս նոր հարսի մի, այլ արդ թա- փած թափօրիւ, հողոյն ու հողոյն ա-ւարի տրուած, գարնան սօսաւիւնն աշնա- նային շրջանի փոխած, ոտիցս ներքեւ, գերեզմանի մի շուրջն հեւացող, ուրուի մի ջայլակոծ հեծիւնն կը հանէին: Հեծիւն, որ տերեւազուրկ ու գօսոտ մերկ ճեղին վե-րայ վայող ագռաւուց խապոտ կոնիւնի հետ խառնուած, ալ աւելի տխրազուշակ բը- նաղբումներ եւ մահաարտուռ յոյզեր կը խրտէին յիմ ներս: Սաղարթք եւ ծաղ-կունք խառնեալ՝ որք կարծես բնութեան դաւուրները լինել կը թուէին: Այո՛, ա- շունք Մօտայի գերեզմանը պեղած էր, որ-պէս քիչմէն ձմեռը նորա ճերմակ պատանքը պիտի գայ սփռել եւ իւր ներքեւ, Սրար- չութեան խորախորհուրդ գոյափոխութեան մի ծրագիրն եւ վերածնութեան մի գործն հանելու համար ի գլուխ:

Ի զո՛ւր կ'որոնէի գտնել այն գեղեցիկ ծովալիւզ Մօտան որ, ի գարնան, այգուն՝ ճաճանչներէն աւելի լուսազեղ, ի գիշերի, աստղերէն աւելի մոգական ակնարկներու, որ ծաղկներէն աւելի խնկաւէտ ու չքնաղ դէմքերու, հիատեսիլ թատր մի կը հան-դիսանար, այն Մօտան, որ երբեմն թըռչ-նեկաց ճուռողումէն աւելի ճլղուն շրթնե-կաց երգերու տաղարանն էր: Որ զեփու-ռէն աւելի կ'ըրկարոյր չլուսններու եւ իւր առջեւ տարածուող կապուտագեղ եւ խոյ-տալանջ ծովուն ծփումներուն չափ՝ ճա-կատներն ու հողմներն յուզող գեղեցիկ ըզ-գացմանց եւ վառվառն երազներու համա-ռօտեալ տիեզերքն էր: Հոն՝ ուր էր եր-բեմն կը տեսնէինք մի եւ նոյն ճեղին վը-րայ թառող զոյգ մի տատարակաց հանգոյն ջուխտ ջուխտ սիրելեաց նաղբաճեմ եւ զուարթագէտ երթեւեկներն: Մօտան՝ ուր կոյսն գնար իւր պճնամոլ կամ պչրասէր հմայքն սփռել եւ զաչերն ու սրտերը զօշո-տել, ուր խորի կողարձին նետերէն աւելի սպառազէն, կ'գնար մերթ Շամիրամէ մ'ա-ւելի զսոռ շախարհակալի մը պէս, մերթ Մուսայի մի զօրէն, ներշնչուն, մերթ ծու-վուն, երկնքին ու ցամաքին բոլոր գեղեցկու-թիւնները զլող, մենաշնոհեալ երկնուհւոյ նման: Մօտան՝ ուր երիտասարդն՝ ուրբուն ընչաց տէգերովն եւ ճօճելով ճկուն ցոպն՝ ի ձեռնին, որպէս թէ փքուն ամենակարող տիրապետութեան մի միահեծան գայիսունն լինէր, լանջուողոյց եւ սիգապանծ կ'երթար, ժպիտի նշով մի, ծիծաղի շառաչ մի, հիւսց-քի եւ հրապոյրի զիւթ մ'աւելի ժողովելու կամ սփռելու համար: Ուր շուրջանակի զը-նար ուսանողն որոճալու եւ օրօրելու հա-մար իւր երեւակայոտ մտաց մէջ գալրո-ցական անուրջներն եւ դասական զմայլում-

ներն, որք, իւր ուղեւ, եւացող զեւացող խայտաբղէտ ու հմայուն տեսարանաց հետ՝ ց'անհուն կը պէսպէսնային եւ կը բազմա-պատկէին, որք՝ իւր աշաց հանգէպ, ըն-դարձակուող հորիզոնին նման՝ կը տարա-ծուէին ու կ'ընդլայնէին: Ուր կ'երթար՝ սը-գաւորն՝ իւր տխրանաց ժանգերը ցրուելու եւ ծծել տալու համար զայնս ծաղկանց, տերեւոց եւ հողմոց, այդ ներշնչուն, ե-րազայոյց եւ խանդավառ Մօտան, դար-ձած եղած էր անապատ սգալիկ, որքի մի պէս ընձն, այլոյ մի պէս՝ արցուն-քոտ, եւ իւր աւերակաց վերայ հեծեծող եղբարմօր մի նման՝ ծանրաթափած: Սա-կայն Մօտան հողեկարք սիրականի մի գե-րեզմանին նման, իւր նուաղկոտ նայուածոց վերջալուսերուն եւ իւր գարնանայն յիշա-տակաց թարչամումներուն մէջ տակաւին կը կրէր ու կ'աղօտանչուէր գեռ անդ ան-թարչամ եւ անշէլ հրապոյրներ ու սիրա-ւէտ, սրտաւէտ յոյզեր, զորս եթէ կարելի լինէր, ի ծագ գեղերփնեանդ եւ սրտե-րակ գրչի, ծաղկաբաղն եւ քերդ ուղահւր խոհերու վերածել, կը լինէին այնք մեղա-մաղձոտ եւ մեղաշնակ բանաստեղծու-թեան բազմազմայլ մի հոգեմատեան, զոր վերծանելու եւ հասկնալու համար, ոչ մի-այն թուշոյ, ծաղիկ, նշուլի, ստուերի, հողմի, ալեկի, տերեւի լեզուներն ունենա-լու է, այլ եւ աստուածաշունչ միտք, ա-րեւի աչք, օդոյ եւ հորիզոնի չափ ընդար-ձակ եւ լայնաթեւ հոգի, գոյներու չափ ցոլուն, գեղատիպ, բազմապիսի եւ նկարէն երեւակայութիւն: Սակայն է՛ր բնութեան այս ցամքած դէմքին վրայ ընդ երկար պար-տասներ մեր գրիչ, ոչ գծերուն ու գոյ-ներուն կ'ակնկալեն մարդկային եւ հոգե-կան աւելի դաւար եւ աւելի կայտառ դէմ-քեր հայ մամլոյն, հայոց գեղեցիկ գալու-թեանց մանրաշխարհին կամ նորաստեղծ տիեզերքին մէջ: Նոր մէկ կողմէն տիւէ ա-շունն՝ իւր ամպերով ու մառախուղով, մեր երկնից վերեւ, անձրեւի արտասուաց առ-դատարարովն՝ մեր արտերուն եւ արօտնե-րուն մէջ, իւր սիկով ու տղմով, մեր փո-ղոցաց վրայ, իւր մաղձովն ու թափով մեր հողմներուն ի խոր, եւ իւր եղեմանց փա-բաղ տարսուռովն մինչեւ մեր գորգապատ ներքնասենեկաց անկիւնը, ց'ուրջն վառա-րանին իսկ, միւս կողմանէ սրտի, մաքր եւ հոգւոյ մշտադաւար եւ փթթիւնագեղ գա-րուն մի կը ծաղկազարդէ մեր գրական աշ-խարհ:

* * *

Գրաբեւոյ՝ Է. Գրաբեւոյ՝ Ս. Երեւանի աղա-բեմն պերճախօս շնչաբեր ուրուստն մի ներ-քեւ կը դողայ եւ կը դողացնէ մեր սրտեր, նորանոր զգացմանց ու մտածմանց ելեկող-բացմամբ:

Հոն Հրազդան՝ այժմ առաւել քան եր-բէք՝ իւր արծաթալեակ խոխոմամբ կ'ու-ռոգէ աղբային ժամանակագրի անջողի գաշտն եւ ոչ թէ կ'ողորդէ իւր քաջա-ա-լիքներով՝ որպէս երբեմն Մարգէլ եւ իրի ճարտասան հեղինակն կը բացատրէր իւր սովորական պերճաշուրթն լեզուաւ:

Հոն Մեղանիա՝ իգական սեռին նորա-նչան Մուսան, ոչ անունն իգի հոգակն ունի, իսկ ոճն՝ այրի կորով, որ աղջկան մի սիրտն եւ երիտասարդի մի հոգին կը կրէ, որ կը գրէ ինչ որ կը կրէ: Կրք՝ որ իւր ձեռքն է, եւ գրական ախտ՝ որ իւր գրա-կան առաքելութիւններն են: Նէ՛ որ մերթ

Որփէսի նման, իւր լաւահառաչ բնարով գեհնէն ի գեհնէն բայլամալոր կը դեղերի խիլ արկեալ որոնել գտնելու համար զիւր Ներիդիկէն, մերթ Սլափոնի յաւերժափառ կոյրին նման, ողբերգեւ համար իւր կու-րուստեալ դրախտ: մերթ Նրեմիայի նման, արցունքոտ եօթնաղնեանաւ ջայլելու համար իւր քարուքանդ Սաղիսին աստուածափառ փլատակաց վրայ: Է զի Դաւթայ եւ Նա-րեկացւոյ նման, արցունքը մեղանի եւ հա-ռաչանքները խօսքի փոխարկելով հոգեղը-զորդ աղաղակներ կ'արձակէ: Եւ է զի, Յորայ նման, աղէկուող յուսակուող տա-ւիզովն կը մանչէ: Մեր մեղամաղձոտ քոյ-րըն Մեղանիան ընթերցողաց հետ կը ներէ անշուշտ մեր այս հոգեպատում՝ կենսագրո-ման զօր ի գիր առնել բերուած եմ՝ ներ-շնչեալ նոյն իսկ իւր հոգեպատում եւ հոմե-րական մտածութիւններու մեծաշուք պատ-կերներէ, որք քան զամէն պատկերներ աւելի ներշնչուն են եւ ներգործուն:

Մեղանիայի հետ կրնանք մոռնալ հայ Մուսայից կաճառին օգոստոսէին Տ. Ս. Տիւ-նաբ փաշա, աղբային այդ առաջնակարգ վիպասանութիւն, որոյ Մայրան այնքան դրա-կան արուէգ պայքար մը յարոյց եւ հայ բա-նասիրաց ց'այնվայր կնոջ նկատմամբ քա-ղած՝ յօրինած ու մթերած թէր ու դէմ գաղափարներն յորդալոյս ի հրապարակ անդր հոսեցուց:

Արդարեւ մեր սեռին դրական գոհար-ներէն թանկագինն եւ շողողազոյնն հան-դիսացաւ: Իւր Մայրան, իւր Սեփանն եւ Սրբաբն հետգհեմէ զիրար գերազանցող ընտանեկան երջանկութեան հատընտիր ի-տէալներ, ամուսնական սիրոյ անապական պատկերներ են, որոց մէջ սիրոյ հետ խառն ալ՝ աղղու եւ սուր գրչաւ մի կը նկարա-գրէ ինչ որ ահռելի, խոտելի, պժգալի ունի ատելութիւնն: զայնս ամենեսին այն-պիսի մահաբոյր գոյներով եւ աղետալի հե-տեանօք մեզ կը ներկայացնէ, զոր եթէ Մատանն իսկ ընթեւնու հրեշտակի գոյա-փոխիլ կը տենչայ, սոսկալով իւր կրից ճի-ւաղներէն:

Փափաքելի էր որ Վսեմ. Տիկինը փո-խանակ լոկ իւր ընտիր վիպերով մեր մէջ բարեօք գրելու, բարեօք խորհելու, բարեօք ապրելու եղանակներն ուսուցանելու, հարկ է որ միանալով Մեղանիայի հետ, գեղեցիկ սեռին յատուկ թերթի մի խմբագրութիւնն ստանձնէ՝ աշակից ընտրելով հատընտիր գը-րագիրուհեաց հոյլ մի, որով մեր սեռին իմացական մակերեւոյթն աւելի կը բարձ-րանայ եւ կ'արդիւնաւորի:

Ապա կնքելով խօսքս, չը կարեմ լուռ անցնիլ Սեփանն եւ Մայրան հորիզոնին վե-րայ մերթ ընդ մերթ կնք անուան ներքեւ վիպական եւ բանաստեղծական դպրոցի նորափետուր գրչուհեաց, որք իրենց ըզ-գայնութեան, փափկութեան, ճաշակի եւ ոճոյ գեղեցկութիւններ կը յաւելուն իգա-կան սեռի գրական տաղանդին եւ որք ար-դարեւ կ'արժեն ընդունիլ ամենուրեք եւ ամենուրեք իմաստնոց եւ իմաստուհեաց շնորհակալեաց խնկեր:

Գառը-գիւղ

ՄԻՈՒԱ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (18)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՍԱԿՆԵՐ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Միսի Մրդարի Բերիայէն գէպի յերուսաղէմ մեկնելու օրերը մեծ պահոց մէջ լինելով, ուրիշ գաւառացի ուխտաւոր ընկերակիցներ ալ կը գտնէ իւր այդ ճամբորդութեան մէջ. իրրեւ աղքատ եւ ջերմ բարեպաշտ կը կերակրուի եւ կը խնամուի անոնցմէ եւ իւր նաւու վարձքն ալ վճարելու անկարող ինքզինքը ձեւացնելով, իւր ուղեկից ուխտաւորաց վրայ կը բարդէ Մէկ խօսքով բոլորովին ձրի մինչ Երուսաղէմ երթալը հերիք չը համարելով, ինքզինք աղքատ ուխտաւորաց կարգին նշանակել կուտայ. եւ հոն անցուցած օրերուն ո՛չ միայն մէկ ստակ վանքին նուէր չի տար, այլ եւ իւր ծախքն ալ վանուց վրայ կը բեռնայ ու իւր բամբակի լիւրայներն իրենց տեղ կը մնան:

Մեր խաչագող միսին ի՛նչ մեթոտով որ Երուսաղէմ կ'երթայ, նոյնպէս ալ մինչեւ իւր տունը կը վերադառնայ, եւ իւր այս վերջին ուղեւորութեան մէկ ստակ իւր քրտակէն չը հանեցնէ ետք, ապրիլէն անդին քանի մը հարիւր դրուշ ալ ձեռք կրնայ:

ԽԳ.

Սովորութիւն մը կայ Հայաստանի մէջ որ Երուսաղէմ ուխտի երթացող միսիները երբ կը վերադառնան, թէ՛ դիւղացի լինին թէ քաղաքացի, ու երբ որ իրենց հայրենիքին կը մօտենան, մեծ բազմութիւն մը զանոնք ջղիով եւ գինիով, երգով ու պարով դիմաւորելու կ'ենայ, եւ ապա նոցա բարեկամներն ու զրացիները մէկիկ մէկիկ «աչքի լոյսի» երթալով համիչ մը կամ կըտոր մը Հալէպի գունաւոր սապոն նուէր նուէր կ'ստանան, իւր նշանաբան Երուսաղէմէն նորեկ հաճեցերին: Բայց միսի Մրդարն այս սովորութեան հակառակ իրեն աչքի լոյսի եկողներէն մէկմէկ ոչխար միսի լինելուն նուէր կը ստանայ եւ այս միջոցաւ գրեթէ հարիւր հատ ընտիր ոչխար ալ կ'ուենայ:

Միսի Մրդարն Երուսաղէմէն վերադառնալէ ետք, վերջին աստիճան անգուծ կը դառնայ, եւ խեղճ գեղջուկներն երբ կը տեսնեն նորա քար-սիրտ հոտաւորութիւնը, կը սկսին բառնալ նորա դէմ խիստ մեծ դժգոհութիւնը, միշտ բացազանցելով թէ. «Քեզի Մրդարն միսի եղնեղաց սօրայ ջըհուտ է գարձեր, աղորդ է որ կ'ըսեն միսսիք ջիսի ջուր կը խմեն»:

Բայց ի՛նչ փոյթ միսի Մրդարին ժողովրդի գանգատն ու դժգոհութիւնն, ի՛նչ փոյթ իրեն որ գաւառի մը ամբողջ ժողովը դեռնի նիւթական ոյժն իւր քարստութեամբ կը ջլատուէր, իւր միտքն ու խելը, իւր տունն ու տեղն էր, իւր «լաճ» ու ֆայիզն էր, եւ այսպէս ահագին հարստութիւն կը զիլէ՝ այն աղքատ երկրի մէջ, և բոլոր քրտեղ աղայներ եւ աղքեցիկ անտառներ կը գըրաւէ իւր կողմը:

Ահա՛ Տանուտէր Սիրունն ալ այս երեւոյթէն չլացած կը հաճի իւր Սոսունը տալ անոր կող լաճուն որոյ անունը կը կոչուէր «կաղ Սատանայ»:

Թէեւ միսի Մրդարի տղայի անուն Գամջօ էր, բայց իւր հրէշային այլանդակութեամբ եւ կեղտոտութեամբ՝ իրենց գիւղացիք անուանած էին զինք «կաղ Սատանայ»: Եւ միթէ բնական չէ՞ երեւակայել որ Սոսունի նման աղջիկ մը այսպիսի կաղ Սատանայի մը տալ մեծ ոճիր է կը մտածէին այդ երկրի ամբողջ ժողովուրդն, եւ կը սկսէին այսպիսի Տանուտէր Սիրունի անմիտ խորհուրդն:

Կանցնին քանի մը եօթնեակներ Սոսունի նշանուելուն վրայ, եւ այդ միջոցին միսի Մրդարի կողմէն շատ աշխատութիւններ կ'ըլլայ, եւ Գամջօյի հարսանիքի պատրաստութիւններ կը տեսնայ:

Նոյեմբեր ամսոյ վերջերը վերջապէս միսի Մրդարը կ'որոշէ կատարել Գամջօյի հարսանիքն, ուստի մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնէ, առատ գինեքը կը բերէ, այդ գաւառի բոլոր բէյիներն, բէդխուսէք եւ իշխանի տէր կը ժողովէ, սաղերը կը զարնեն, օմանք կը պարեն, օմանք կը խմեն եւ օմանք կ'երգեն հայերէն եւ քրդերէն երգեր: Իսկ միսի Մրդարն երբեմն տան մառանը կը մտնէ, երբեմն թորվան փոյւ կ'երթայ ճաշի, փրկովի եւ չողգամով մսի պտուկներն աչքէ կ'անցունէ. ապա հարսանքներուն քով կը դառնայ, մէկին կուռայ¹⁾ մը գինի կը տայ, միւսին պատառ մը միս ճաշ կը նուիրէ, անդին նստող կիներուն կը մօտենայ եւ իւր խորամանկ ձայնով «Բարի յերեկուն», խնամ խումոր, բարով, խաղար բարով ես եկեր, վեր իմ ալից վեր իմ գլխուն ես եկեր, քո քէֆ քո հալ ինչ տարգ է, դուն հո՞ւր (ինչու) մեզի մոռցար, տունէն ի՛նչ պէքայտութիւն (անհաւատարմութիւն) կայ, թո՛յ, թո՛յ, թո՛յ»: Խնամ խումորն միսու թրմօ անուն աղջկան կեսուն էր, ուստի յարգանք ոտքի կ'ենէ ու փոխադարձ «Բարին ի քո տղէկներու տրեւ, Աստուած քո թագաւորին (նոր փեսայ Գամջօյին ըսել կ'ուզէ) խաց ու տոլվաթ տայ, մէկմէկու գլուխ ծերանան. ի՛նչ ընեմ, խառնիմ քի (մեռնիմ քեզ համար) ոչխար, տաւրի տէր տանտիկին մը կրնայ տնէն դուրս ինկնի»:

Մեծ ապաւին չնորհակալ եմ, կը պատասխանէ միսի Մրդարն, աղուպէ՞²⁾ քո լաճերու վերէն, բարով քո խօսն ալ խանես ի թագն ու պառի: Յետոյ միսին ուրիշ խմբերի հետ մի եւ նոյն կերպով տեսնուելով կը հեռանայ, եւ այդ խառն բազմութիւնն՝ որ աւելի Բարեղնի խառնակութեան կը կրէ նմանութիւն, կը շարունակէ իւր պարզ ուրախութիւնն:

Այն չէնք՝ ուր զետեղուած էին միսի Մրդարի հարսնեւորը, գեղջուկ ընդարձակ մի տուն էր, որոյ մէջ եղած բոլոր կահ կարասիք վերցնելով մերկ գետնի վրայ՝ դէս ու դէն փայտէ կոշտ աթոռներ եւ կակուղ խոտի խուրձեր կային դրուած, իսկ նոցա շուրջը կըր շրջանակաւ մը այր, կին, երիտասարդ, կոյս, մանչ, աղջիկ պարողներէն խառն և խառնուելի երկար գօլընդ (սար) մը կար բոլորուած: Չուռնայի եւ գառի եղանակներէ հետ ծնկածալ եւ մէջքածալ

1) Պղնձէ թասի ձեւով հողէ շինուած գաւաթներ, զոր կը կոչեն կուռայ:

2) Այս բառն օրինակ բառի իմաստով կը գործածեն՝ երբ մէկը միւսին իւր ուրախութեան կամ բախտաւորութեան հասնիլ մաղթէ՝ այս ոճը կը գործածէ:

կը խաղային ամենքն: Այս հանդիսարանը կը կոչեն խաղ-տուն (խաղի տուն):

Երկու օր, զիշեր եւ ցորեկ այսպէս այս ուրախութիւններ ու կեր ու խաւմներ կը կատարուին, երրորդ օրուան երեկոյին նորա փեսէն (նոր փեսէն) պիտի հագուեցնեն, ուստի սովորական պարի եւ մարի խնդիրները մէկ քանի ժամէն կը վերջացնեն եւ քաւոր Մոտոյէն կը խնդրեն որ նոր թագաւորի հետ ջաղամարթի (հանդիսականաց) առջեւ գան նստին որպէս զի փեսայութեան նոր զգեստներն հագցնեն եւ գովասանքի արարողութիւնը կատարեն:

Քաւոր Մոտոն որ այն պահուն դուարներէ ախոռի մէջ, նոր փեսայ Գամջօնը լողացնել տալով «խաղ տուն» ը եկած էին, պահ մը ինքզինքն՝ նոցա ասածը չը լսելու կը զարնէ, ու յետոյ կը սկսի սանախէր՝ նոր փեսան փնտռել, որնոր որպէս թէ՛ կ'ամաչէ, ու երբ գրան ետին կը գտնէ զայն, ձեռքէն բռնելով «Դու հո՞ւր կը խոտիս (խրտչիս), զայն (միթէ) դու մարդ չե՞ս» կ'ըսէ ու իր ետեւէն քաշելով կը բերէ այն խուռն բազմութեան մէջ, թորվան առնութեւ տրուած աթոռի վրայ կը նստեցունէ, եւ ապա «Պա՛ռ, պա՛ռ» կը պոռայ: Անդին երկարահասակ մէկն՝ որ իւր գլուխ դրած ունէր կէս կանգուն երկայնութեամբ սրածայր մի քօլօղ (քիւլահ) եւ նորա շուրջը կապած էր քսանէ աւելի գոյնզգոյն բաֆիկներ եւ նմանէր մեծ ճախրակի, ձեռք բռնած մի ահագին դանակ, կը մօտենայ քաւոր Մոտոյին, ինչ տալու զինքը: «Տէ՛, ուսթայ Յարօ, թէ՛զ (չուտ) մեր թագաւորի գլուխը կնտէ (սափրէ) պալէ բօստնով նխէ»:

ԽԳ.

Աւթայ Յարօն ահագին գունդ մը թուր իւր ձախ բազկի վրայ թեքելով, ձեռքի դանակն ետեւէն ու առջեւէն վրան կը քսէ զայն սրելու համար. քիչ մը այդպէս այդ դանակը ձեռքի վրայ քսեցնէ ետք, փեսայ Գամջօյի ետեւէն գլխուն կը մօտենայ, ձախ ձեռքով նորա գլխի երկար եւ տձեւ քօլօղ վար առնելով վերէն վար ապուշ ապուշ զայն դիտելով՝ գլուխը կը տարուբերէ եւ զարմացական շեշտով մը «Վոյի բարօ (ով հայր), էտ ի՛նչ տարգ գլուխ է, հսի նման կուտայ (կը նմանի) մեր սանդըքարին»: Իրօք, եթէ տեսնող մը լինէր այն ատեն փեսայ Գամջօնն՝ երկիւղէն ալ գիշեր քուն չը պիտի լինէր:

Աւթայ Յարօն ամենայն ուժով մը իր ձեռքի ածելին (դանակը) նոր փեսի գլուխուն կը քսէ, բայց նորա մազերն այնքան կոշտ եւ կեղտոտ էին որ՝ կարելի չը լինիր մի անգամէն նշան մը ընել, ուստի բարկութեամբ մը քաւոր Մոտոյին դառնալով «Մալ միրաթի (տնաւէր) ծամեր նման կուտայ պաղայ պրակի կաղնի ցախերուն, աղէկ է լող մը (քէսէր) առնել էնոնք կրտրել»: Քաւոր Մոտոն «Ղուլամ եմ (ծառայ) բէ, ուսթայ Յարօ, զատէ, զատէ, (բանի մը նմանցուր)», կ'ըսէ:

«Ղաթե՛ խայ, կ'ըսէ Յարօ, ուղգիր (նաչէ) թէ զաթէն ի՛նչպէս է»: Եւ այդ անձոռնի դանակով կ'սկսի տեղ տեղ նշաններ ընել նորա գլխին վրայ, որպէս թէ ձմերուկի պոստան կը դնայ. ու ապա ամեն մարդ տասը-քսան փարա կուտայ նմա, եւ նա (Յարօն) այդ մնացած մազերն էլ կածիլայ, ու Գամջօյի անհեթեթ գլուխը պարսկական գլխու մը կը դառնայ:

Այսպէս ստիպելու արարողութիւնը կը վերջանայ եւ բաւոր Մատոն «Տէ՛», տիրա-
ցու Սրկո (Սարգիս), թէզ ըրէ, փետի թա-
ժայ (նոր) շորեր (զգեստներ) բեր ք կ'ըսէ ։
Այն ատեն Գաւգոյի մայրը նորա զգեստ-
ները ալրի մալի մէջ դրած տիրացու Սրկո-
յին կը բերէ եւ Սրկոն ալ զայն երկու ձեռ-
քով գլխէն վեր բռնած, նոյն խուռն ամ-
բոխի մէջէն անցնելով նոր թագաւորի քով
կը գայ բաւոր Մատոյին յանձնելու զա-
նոնք ։ Քաւոր Մատոն Հանդիսականաց դառ-
նալով «Հաշ կացէք» (լուր մնացէք), կը
պոռայ ։

Ղալաբալը կը լռէ ։
Քաւոր Մատոն թաժայ փետի շորերու
մաղն երկու ձեռքով վեր բարձրացնելով՝
«Ասէ՛ք Ասպած շնամաւոր ընէ՛ք» կը պոռայ,
եւ ամբողջ Հանդիսականք մէկէն «Ասպած
շնամաւոր ընէ՛ք» կ'որոտան ։

Յետոյ կը սկսին մէկիկ մէկիկ նորա բո-
լոր զգեստները (զոր իրենք կը կոչեն «փե-
տիթի շորեր») հագուեցնել եւ ամեն մէ-
կին հագնելու ատեն «Ասպած շնամաւոր
ընէ՛ք» կը պոռան ։

Հուսկ ուրեմն, դէղին, կարմիր, կա-
նանջ եւ գոյնզգոյն անմանել մետաքսէ եւ
բրդէ խաչաձեւ պսակ մը՝ զոր հիւսել տը-
ռած էին, կը բերեն նորա կապուած քո-
լոյի վրայ կը գործեն, մէջքէն սուր մը կը
կապեն եւ ձեռքը թափինալով խնձոր մը
կը տան որ բերնի վրայ կը դնէ ։

Քաւորի համար ուրձ*) մը պատրաստ
կը բերեն անոր ձեռք կը տան նա ալ իւր
փոխանորդին կը յանձնէ. ու դարձեալ հան-
դիսականաց դառնալով. «Տէ՛, ճըհէնէր (ե-
րիտասարդներ) ելէ՛ք թագաւորի գովքը ը-
նէք» ։ ու ինքը պարի գլուխ ելնելով կ'սկը-
սին պարել եւ երգել ։

Մեր թագաւորն էր խաչ,
Խաչկոճ խաչ ու մաչ,
Պսակն էր նախուռն,
Ուր (իւր) արեւ կանանչ ։

Մեր թագաւորն էր խաչ,
Խաչկոճ խաչ ու մաչ,
Ուր քօլօզ սպիտակ
Ուրեւն էր կանանչ ։

Մեր թագաւորն էր խաչ,
Խաչկոճ խաչ ու մաչ,
Անթառին կարմիր
Ուր արեւ կանանչ ։

Մեր թագաւորն էր խաչ,
Խաչկոճ խաչ ու մաչ,
Խալափն (չալփար) էր նխուռն
Ուր արեւ կանանչ ։

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Մանգեալն յաջորդ խոսով)

*) Մեծ փիլակի ձեռով փայտեր են չին-
ուած զոր կը զարդարեն գոյնզգոյն բրդե-
րով, շարան շարան խնձորով, չափով եւ
զատարկուած ծուխ կըր կեղեւներով ։

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

Դեկտեմբեր 26-էն 31

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Բարիգէն հեռագիր մը կը ծանուցանէ
թէ խորհրդարանական նստաշրջանը փակ-
ուեր է այս չորեքշաբթի օր ։ Մերակոյտի
երկնագոյն անդամ Պ. Գառնո (Հայր Հան-
րապետութեան նախագահին) եւ Երեսփո-
խանաց ժողովոյ երկնագոյն անդամ Պ. Պը-
լան, որը առժամեայ նախագահ էին, սո-
վորական ատենախօսութեան մէջ միութիւն
յանձնարարեր են ։

Պ. Ֆլօքէ վերստին նախագահ ընտրուե-
ցաւ Երեսփոխանական ժողովոյ ։

— Թանի Հռովմի թղթակիցը կը հեռա-
գրէ ։

«Երէկ (յուշուար 1) ի Հռովմ տեղի ու-
նեցաւ Լեւոն ԺԳ. ի քահանայական յիս-
նամեկին հանդիսաւոր տօնախմբութիւնը ։
Խուռն բազմութեան մը մէջ, Պապը, չքեղ
եւ գրեթէ թաւերական փայլով մը չըրա-
պատեալ, Վատիկանէն իջաւ 1) ։ Պետրոսի
մայր եկեղեցին, աթոռի մը վրայ ամբարձած
չընցաւ եկեղեցւոյն մէջ, պատարագ մա-
տոյց մեծ խորանին վրայ, Զեւ Սաքառ-
ճեանքանէն աղօթքն երգեց, եւ առաքելա-
կան օրհնութիւն տուաւ ։ Ո՛րք արկածով
չընդմիջեցաւ այս հանդէս, որ ցոյց կու-
տար, հակառակ Պապութեան կուսակցաց,
թէ Պապը կատարեալ ազատութիւն կը վա-
յելէ իւր պալատան մէջ իւր պաշտօնն ի
գործ դնելու ։ Բայց իտալեան Կառավա-
րութիւնը, լիակատար անկախութիւն ա-
սպանդելով հանդերձ Պապին, զոր քերմե-
ռանդ Պապականք իրեն բանտարկեալ կը
նկատեն, նախանձայուզութիւն ցուցուց
նաեւ իւր արժանապատութիւնն եւ հայրենի
երկրին ամբողջութիւնն անվթար պահելու,
թող չտալով որ քաղաքական մեծարանքներ
մատուցուին Պապին ։ Օրինակի համար,
Հռովմայ քաղաքային հողաբարձու Գորլոնիա
իշխան՝ առանց Թագաւորին արտօնութեան՝
Հռովմայ քաղաքային խորհրդոյն խնդակցու-
թիւնները մատուցուած լինելով ի Վատի-
կան, պաշտօնանկ եղաւ անմիջապէս ։ Այս
տնօրինութիւնն այնպիսի հանդիսաւոր առ-
թիւ մը՝ կը ցուցնէ թէ իտալեան կառա-
վարութիւնն յարգալից այլ հաստատու
եւ ազգու ընթացք մը կը բռնէ Պապութեան
եւ իւր յաւակնութեանց նկատմամբ ։»

— Լեւոն ԺԳ. իւր քահանայական յիսնա-
մեկի առթիւ ուխտաւորներն ընդունելով
արտասանած ճառովը վերստին պնդեց Պա-
պին աշխարհական իշխանութիւնը վերա-
հաստատելու երազին վրայ ։

— Բեդերսպուրկէ կը ծանուցուի թէ Կա-
ռավարութիւնն որոշած է փետր. 15-ին
վերաբանալ փակուած Համալսարանները ։
Մինչեւ այն ժամանակ կը յուսացուի որ ու-
սանողաց միտքերն հանգարտին, եւ նոր
անկարգութիւնք չը ծագին ։

— Լորտ Սալգարիի նախարարութիւնը
կը պատրաստուի մահացու հարուած մը
տալ իւրանտայի Ազգային Գաշնակցու-
թեան, ջնջելով անոր Տպլինի կեդրոնական
փարչութիւնն իսկ ։ Ազգային Գաշնակցու-
թեան վարիչներն ալ ո՛չ նուազ հաստա-
տամտութեամբ կ'աշխատին գաղտնապէս

չարունակել իրենց ընկերութեան գործերը ։

— Թայֆի խօսքին նայելով, Վիէնայի
մէջ տիրող կարծիքն է թէ Գերմանիա պա-
տերազմ կ'ուզէ, արդի մտահոգութեանց
միանգամ ընդ միշտ վերջ տալու համար ։

— Պ. Կլատտոն ջերմ համակրանք ըն-
դունուեցաւ ի Ֆիորէնձա, ուր ժողովրդա-
կան պատուիրակութիւններ ուղերձներ մա-
տուցին իրեն ։ Պ. Կլատտոն իտալերէն
պատասխանեց, արտայայտելով նոցա ջերմ
համակրանք իտալացի ազգին վրայ ։ Պ. Կլ-
ատտոնի պերճախօսութիւնն եւ ազգու
գրիչը մեծապէս նպաստած են իտալեան
ազատութեան յաղթանակին ։

— Սթանֆորտի Պերլինի թղթակիցը կը
ծանուցանէ թէ Եւրոպեան միջազգային կա-
ցութիւնը տակաւին շատ վտանգալի կը
նկատուի դերմանական քաղաքական ակում-
բոց մէջ ։

— Բեդերսպուրկէ կը հեռագրուի առ
Թայֆ թէ Ռուսիա կը սպասէ որ Աւստրիա
եւս, Գերմանիոյ պէս, պախարակէ եւ մեր-
ժէ Ֆերտինանտ Իշխանի դատը ։

— Բեթոյ Ջայքսն կը ծանուցանէ թէ
Ռուսիա կը պահանջէ որ իրեն յանձնուի,
Ֆերտինանտ Իշխանը պատժելու գործն ։
Միւս կողմէ Ռուսիա բնաւ չի հաւանիր եւ
չպիտի հաւանի Պոնտ Հէրսէքի գրաւ-
ման Աւստրիոյ Հունգարիոյ կողմէ ։

Ն Ե Ր Ք Ի Ն

Յայտնի է թէ Պառոն աը Հիւրի ծա-
նուցեալ հաշուական խնդրոց համար բա-
նակցութիւնը կը լինէին Բարձր. Մեծ-
պարքոսին եւ Պառոնին միջեւ եւ այս բա-
նակցութիւնը արդիւնք մ'ունեցած չէին
Արդ, բարձրագոյն հրամանաւ յանձնաժո-
ղով մը կազմուած է, որ կը բաղկանայ նա-
խորդ Մեծ-Եպարքոս Բարձր. Սայիտ փա-
շայէ, Առեւտրական եւ Հանրօգուտ շինու-
թեանց նախարար Վսեմ. Զինի փաշայէ եւ
Հանրօգուտ շինութեանց յանձնաժողովոյ
անդամ Վսեմ. Հասան Ֆէհմի փաշայէ ։ Սոյն
յանձնաժողովոյ պաշտօնն է բանակցու-
թեանց վերսկսիլ եւ համաձայնութիւն մը
գոյացնել ։

— Պերլինի նորակազմ նահանգին կու-
սակալ Ալի փաշա անձնական գործոց պատ-
ճառաւ տանն-հինդ օրի չափ յետաձգած է
իւր ուղեւորութիւնը, թոյլտուութեամբ
Վեհ Սուլթանին ։

Յժամանումն Ալի փաշայի, Նուսուհի
պէյ փոխանորդաբար պիտի վարէ կուսա-
կալութեան գործերը ։

Սուրիոյ նահանգին տնտեսական եւ ար-
տաքին յարաբերութեանց տնօրէն յետ այ-
սորիկ Պերլինի մէջ պիտի կատարէ իւր
պաշտօնը ։

— Բու մէկի Գազապէրի անուանեցաւ Պե-
տական Խորհրդոյ անդամ Իւլեմա Էօմէր
Լուի Փիէ Էֆէնտի ։

— Ներքին գործոց նախարարութիւնը
զինուորական անասնաբոյժ մը պիտի զրկէ
ի Գարա-Խարը Շարգի օրպէս զի հարկ ե-
ղած միջոցները ձեռք առնելով արգելու ա-
նասնոց մէջ ծագած տարափոխիկ հիւան-
դութեան ճարակիւր ։

— Ստանայի թագապետութեան նախա-
գահ Հաճի Ահմետ Թէֆթիկ պէյ պաշտօ-
նանկ եղած է իւր ինչ ինչ զեղծմանց պատ-
ճառաւ ։ Զեռնհաս իշխանութիւնն այս առ-
թիւ ձեռնարկած է հարկ եղած ընձու-
թեանց ։

— Անտառաց եւ Հանքաց վարչութիւնն ածուրդի դրած էր Արզնիի հանքէն հանուած երկու միլիոն եօթն հարիւր հազար օսա պղինձն : Արդ , վերջին գինը տուեր են Պանք ար Գոստանդինոսը եւ Պ. Պ. Հէրման Պախ ու Գորոնիօ : Պղինձները պիտի յանձնուին Արզնիի մէջ :

— Թաթիք խօսելով Քարբերդի , Տիգրանակերտի , Սեբաստիոյ եւ Հալէպի նահանգաց երկրաշարժութեան վրայ , կ'ըսէ թէ օր աւուր անկեալ վիճակի մը կ'ենթարկուին անոնք եւ թէ այդ կողմերն ո'չ երկրաշարժական Սեւեակներ կան եւ ոչ քննիչներ : Թուրք թերթն ի վերջոյ ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ :

— Առողջապահական վարչութիւնը նկատելով որ հանրային առողջութեան վերաբերեալ տեղեկութիւնը բոլորովին ապահովիչ են , Խտայիայէն , Սարտենիայէն , Սիկիլիայէն եւ Մալթայէն եկող չորհրդաւորաց համար հաստատեալ բժշկական այցելութիւնը վերցած է :

— Թաթիք կայս . կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ Այտընի եւ Գոսապայի երկաթուղեաց հասոյթներուն վերայ որք այս տարի աւելի նուազ արդիւնք տուած են բաղքատամբ նախորդ տարիներու , որովհետեւ , կ'ըսէ թուրք թերթն , այս հասոյթի նուազումն ո'չ թէ միայն երկաթուղեաց , այլ Զմիւռնիոյ առեւտրական ուրիշ գործողութեանց մէջ եւս տեսնուած է :

— Ըստ տեղեկութեանց Կադէշ Էթնօֆիի , մէծիւրիցէի յանձնաժողովը պիտի առաջարկէ շրջաբերութենէ քաշել 360,000 ոսկւոյ վեցնոց , եւ զայնս հինգ , երկու եւ մէկ զորութիւնոց արծաթ մանր դրամի վերածել : Այս գործողութեան յառաջ բերելիք վնասները կը հաշուին 150,000 ոսկի : Յանձնաժողովն այն կարծիքէն է եղեր թէ , այս զոհողութիւնը պէտք է մասամբ կայս . կառավարութիւնը կրէ եւ մասամբ մայրաքաղաքիս գրամական հաստատութիւնը եւ :

— Մայրաքաղաքս հասած լրոյց նայելով , ամերիկացի միտարատէր Պ. Ճէյ Կուլտ Պրէնթ , ժամաներ է իւր Արալանդա գրաստանով : Պ. Կուլտ շատ քիչ պիտի մնայ յԱթէնք :

Զրօտանալը Պրէնթի առջեւ կ'սպասէ մեծահարուստ ամերիկացին Կ. Պոլիս բերելու համար , երբ օդը ներէ : Պ. Կուլտի կընկերանայ իւր որդին միայն :

— Պաշտօնական անուն Փրանսերէն լրագիրն որ 1882ին հիմնուած եւ 1884ին խափանուած էր , վերստին հրատարակուի սկսած է ի Սոֆիա : Պաշտօնական առաջին լրագիրն է որ կ'երեւի իշխանապետութեան մէջ , յորմէ հետէ Սոպրանիյէն քուէարկեց Մամուլ տալու թեան օրէնքը :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Գոտական եւ Կրօնական գործոց նախարար Վսեմ . Ճէվտէթ փաշա չորեքշաբթի Ամեն . Ս . Պատրիարք Հօր զրկեց նորակազմ Քաղաքական Ժողովոյ ընտրութիւնը վաւերացնող հրամանագիրը : Ն . Ամենապատուութիւն վաւերացման գիրն ստանալով , հրապարակի ուղղեց Քաղաքական Ժողովոյ անկախ յառաջիկայ երկուշաբթի օր ի նիստ բուրսուելու համար ի Պատրիարքարան :

— Կիւրակէ օրը մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց մէջ հանգիստուր պաշտօններ կա :

տարուեցան ի հանգիստ հոգւոյ հանգուցեալ Սպարթալեան Վսեմ . Յովհաննէս է . Ֆէնտիի :

Քարողիչը նախ ի լուր ժողովրդեան կարգացին Ազգ . Պատրիարքարանի կողմէ զորուած շրջաբերականն եւ յետոյ դրուատեցին բարեկիշատակ հանգուցելոյն առաքինի կեանքն եւ նորա ազգայէն գործերն : Յաւարտ Պատարագին տեղի ունեցան հոգեհանգստեան պաշտօնք մեծ հանգիսիս :

Իզմիրէն առնուած նամակներ ընդարձակօրէն կը նկարագրեն Վսեմ . Յովհաննէս էֆէնտիի յուղարկաւորութեան հանդէսը :

Յուղարկաւորութիւնն ամենափառաւոր չքով կատարուեր է անցեալ չորեքշաբթի օր , 25 դեկտեմբեր , ի ներկայութեան աւելի քան 10 հազար հոգւոյ բաղմութեան մը քաղաքին ամեն բնակիչներէն : Քաղաքին զինուորական հրամանատար Օսման փաշա եւ կառավարական բաղմութիւ պաշտօնատարք , քաղաքին բոլոր հիւպատոսք եւ նշանաւոր անձինք , ամեն ազգէ պատգամաւորութիւններ մտնակցեր են յուղարկաւորութեան : Ամեն կողմէ շքեղ ծաղկեփնջեր զրկուած էին :

Ս . Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ դամբանական խօսեր է Գեր . Մելքիսեղ եկ Սրբազան , որ յատուկ հրաւիրմամբ Գարաթաշէն եկած էր : Նմանապէս ատենաբանութիւնը եղեր են հայերէն , թուրքերէն եւ իտալերէն լեզուաւ :

Նոյն օրը փակ մնացեր են Իզմիրի ո'չ միայն ազգային , այլ և յոյն և հրեայ վարժարաններն , ամբողջ Հայոց Շուկան և միանգամայն Մաքսատունը :

Իզմիրի բոլոր լրագիրք ցաւք ծանուցանելով Վսեմ . Յովհաննէս էֆէնտի Սպարթալեանի մահն , հրատարակած են նորա կենսագրութիւնն եւ յուղարկաւորութեան հանդէսը նկարագրած :

Լ . Հէրշլի մասնաւոր թղթակիցը կ'ըսէ , ի մէջ այլոց , թէ հանգուցեալ Բարբարը կը թողու 250,000 ոսկւոյ հարստութիւն մը որուն մէկ կարեւոր մասը բարեգործական նպատակներու կտակուած է :

— Պատրիարքական Գեր . Փոխանորդ Հայրն , ընկերակցութեամբ Արշարունի Արթ . Յովհաննէս վարդապետի , Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Մեծ . Աբրահամ էֆէնտիի եւ Նարկիլէճեան Մեծ . Յակոբոս էֆէնտիի , անցեալ շաբաթ օր Միւնիքեան տոնին առթիւ շորհաւորական այցելութեան գնաց ի Ֆէնէր Յունաց եւ ի Բերա Հայ-Հոռմէ օկիանայ Պատրիարքարաններն :

Գեր . Փոխանորդ Հայրն եւ Ֆրէնկեան էֆէնտի յետոյ Օրթագիւղ երթալով նոյնպէս շորհաւորական այցելութիւն տուին Պուլկարաց Գեր . Էկզարքին :

Պատրիարքական Գեր . Փոխանորդ Հայրն յետ այս այցելութեանց Ղալթիոյ եկեղեցին երթալով աչքէ անցուց կատարուած շինութիւնները :

— Միացեալ ընկերութեանց Մշոյ վարժարանի փակման լուրը , զոր հաղորդեցինք անցեալ շաբթու , ընդհանուր վիշտ պատճառած էր : Ըստ նորագոյն տեղեկութեանց՝ այդ վարժարանը փակուած չէ , սպասուելով ի Պոլիս ինեկիք կարգադրութեանց :

— Տիգրանակերտէն կը գրեն հետեւեալը .

« Երկու հազար տուն Հայերէն միայն 270 մանչ և հարիւր ալ աղջիկ վարժարան կ'երթան : մնացեալներն ինչ կ'ընեն . մաս մը օտար վարժարաններն կը յաճախեն , մաս մը փողոցները կը շափեն և մաս մ'ալ արհեստի կ'երթան , մինչ անդին օտար որսորդք ի-

րենց վարժարաններն հայ մանկտիով լցնելու համար երբէք զոհողութիւն չեն խնայեր : Լատինացւոց ծննդեան տօնի առթիւ այցելութեան գնացող հայերէն ոմանք այս անգամ ցաւ ի սիրտ կը պատմէին թէ լսած են որ ճիլուիթք Տիգրանակերտի մէջ բարձրագոյն վարժարան մը բանալու համար ամեն պատրաստութիւն տեսած են և Փարիզէն ալ յատուկ բրօքէսօր մը գալ ապրապըրած են . այդ վարժարանի մէջ ընդարձակ ուսմանց ծրագրի մը հետ պիտի աւանդուի նաև հայերէն , թուրքերէն , գաղղիերէն , արաբերէն և դեռ չեմ գիտեր որչափ երէն : Տիգրանակերտի Հայ-Հոռմէականաց Եպիսկոպոս Ֆէրահեան Գերապայծառն ալ այս կողմերը շատ մեծ յոյսերով լեցուցած և այնպէս դիմած է ի Հոռմ՝ նոր գործութեամբ մը վերադառնալու և զպատեհաբար հաւատոյ մղելու : Բայց մեր Հայերն ի լուր այն ամեն պատրաստութեանց ինչ կը խորհին , ազգային գոյութիւն և Ս . Եկեղեցին այդ յախուռն յարձակմանց դէմ պաշտպանելու համար ինչ միջոցներ ձեռք կ'առնուն , յայտնի չէ : Երեւոյթները քաջաբերական չեն . տեսնենք : »

Կրօնական Ժողովը նախընթաց օր ի նիստ գումարեցաւ ի Պատրիարքարան ընդ ատենապետութեամբ Ամեն . Խրիմեան Սրբազանի և զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով .

1. Ժողովը նախ զոհութեամբ ընթերցաւ Դատական և Կրօնական գործոց Վսեմ . նախարարի պաշտօնագիրն որ կը վաւերացնէր նորակազմ Քաղաքական Ժողովոյ ընտրութիւնը :

2. Ժողովը նկատողութեան առաւ Քարբերդի առաջնորդական տեղապահ Շիշմանեան Գեր . Ղեւոնդ Եպիսկոպոսի մէկ գիրն որով իւր հեռագիրներու ու տեղեկագիրներու պատասխանը կը խնդրէր և որոշեց խառն Ժողովոյ ներկայել Քարբերդի խնդիրն իւր ամբողջութեամբ :

3. Այնթապի Կրօնական Ժողովը գիր մ'ուղղելով ի Պատրիարքարան կը ծանուցանէր թէ Մկրտչական կոչուած բողոքականաց նոր աղանդ մը մուտ գտած է անդ և կը գործէ օժանդակութեամբ ամերիկեան ընկերութեանց ու ծանր գալթակոչութիւններ կը պատճառէ եւ թէ ուրիշ մէկ քանի հոգեւոր փառնգներ եւս տեղի կ'ունենան : Ժողովը նկատողութեան առնելով սոյն գիրն որոշեց նորա պարունակութիւնն հաղորդել Կիլիկիոյ Ամեն . Ս . Կաթողիկոսին և ուշադրութիւնն հրաւիրել :

4. Ժողովը որոշեց խառն Ժողովոյ ներկայիւ հովուական այցելութեանց համար գծուած շրջանակներու ցուցակը , պատրաստուած հրահանգն և հանգանակութեան եղանակը :

5. Սկիւտարի Ս . Խաչ եկեղեցւոյ Թաղ . Խորհուրդը խնդրած էր արտօնութիւն տալ որպէս զի Թաղին եկեղեցւոյն վրայ քահանայ ձեռնադրուի Պոյաճեան տիրացու Յակոբ անուն անձը , Ժողովը յետ կանոնական գործողութեանց որոշեց յանձնարարել Ամեն . Խրիմեան Սրբազանի , քարոզիչ Ս . Խաչ եկեղեցւոյ , որպէս զի քահանայ ձեռնադրէ զնա :

Ժողովը զբաղեցաւ նաև այլևայլ խնդիրներով :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՐ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔԻ ՀԵՏԵՒԵԱՆ ՀՈՏԱԻՏ ՆԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արգելադրողի համար Ambrosial cream, օճառու քաղցր ամպիլ-ուղ մարդու համար. Crème de Fraises մորթի կակոնդցնելու համար. Poudre de Cypris զովացնելու և ճերմկեցնելու համար մորթի. Stibode-փայլ ապուր համար մաղերուն և մորու-քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու և մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia աղապնեղու համար. Eau de Chypre արգելադրողի համար. Քաղցրինակի հա-մար հոտաւէտ Նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-rie Christine. Imperial Russe.

977

28-29



ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ԵՌՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍՏԱՌԻԼԵԱՆ ԸՆԿ.

Ընդարձակ առևտուր գաւառաց հետ

Ձինէ եւ ճապայէ ուղղակի բեռցած Գերբնտիր եւ ամեն հաշակի յարմար բէշեր ԳՆԵՐ ՉՂՓՈՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱՆ

Փորձը ամեն գովեստէ լաւագոյն պիտի հաստատէ հիւգ տարիէ ի վեր սոյն վաճա-ռատան ըրած զոհողութիւնքն յաճախորդները գոհացնելու համար:

Պահճէ Գարու ճէլալ պէյ խանի
դրան կից թիւ 10

1000

68-78

Ս. Ոսհակայ եւ Մեսրոպայ մրցանակաւ վարձատրեալ

ՈՒԼՆԻԱ ԿԱՄ ՁԷՅԹՈՒՆ

Գրէյ՝ Յ. Յ. ԱՂԱՂԱՂԻՔՅԵԱՆ

Կիլիկիոյ Ձէյթուն լեռնային աւանին տեղական, կենսական, բանասիրական և լեզուաբանական սոյն նկարագիրն մինչև 1888 յունուար 1 որոշեալ ժամանակաւ պիտի վաճառի 10 դահեկանի, իսկ յայնմ հետէ սակաւաթիւ օրինակաց պատճառաւ գներն պիտի բարձրանան 15 և 20 դահե-կանաց, որոշեալ մասնաւոր կնքով:

Կը վաճառի առ այժմ՝ գրաւաճառաց, Պահճէ գարու ջրաւաճառ Պողոս և Յա-կոբ աղայից և հեղինակին քով շուկայ Վարազճի խան:

1325

6-6

Ա. Զ. Դ.

ՆՊԱՐԵՂԵՆ. ՉԱՅ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ

(Բուսկի Մակագէն)

Յ. Պ. ՊՕՅԱՃԵԱՆ ԵՒ Ս. ՎՐԹԱՆԷՍ-ԵԱՆԻ Ի Մովսանէ թիւ 109 վաճառա-տունը՝ վերջի հրդեհին առթիւ փո-խադրուած է նոյն փողոցին դիմացի կարգը, Սիթէ Ֆրանսէի ստորնայարկը թիւ 42:

1401

1-6

Ա. Զ. Դ.

Խափանեալ Մահալ զաւեշտաթերթի արտօնատէր Գէորգ Էֆէնտի Այվազ-եան՝ Միտիլլիէն ընտիր ճիթաիւղ և օճառ, Թէնոտոսէն պատուական գինի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և աժան գնով կը վաճառէ Ղալաթիա Բէնչէնպիհ բաղար, Իփսի խան:

Մինչեւ ցարդ Այվազեան Էֆէնտիի յիշեալ վաճառատունը գիմողը յոյժ

դոհ եղած են ապրանաց ընտիր տե-սակէն և դնոց չափաւորութենէն:

Այս օրերս լաւագոյն ապրանքներ հասած են:

1318

14-15

Վասն Արտօնատեառն
Տնօրէն-Պատասխանատու
Բ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՇ ԵՒԼԻՆԵՆՈՒԹ ՄԼՔ. ՆՈՐՈԳԻՈՂ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճորմակ ընկած մաղերուն ուղն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը: Գլխու թերի շուտ մը անկեղծ կ'ընէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շնչը կը բաւէ:” Եյգ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքաւորած մաղերը իրենց բնական գոյ-նին դարձան, և ճաղատ տեղերը մաղով ծածկուեցան:

Կերկ չէ, և ամենեւին զեան մը չընէ: Թէ որ կ'ուզես թարմ մաղ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ԿԷՄ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ համաշ-խարհային յաղէ նորոգիչը: (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիու Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-գործներու և անգղիացի գեղագործներու քով:

Կ, գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց: Էսթրա Քարուան, Անգլիական միջերանոց, Եիւրօք Գալալըրմ. և Բզի-տօր Լազանտէլլա 435, Բերա Մեծ փողոց:

ՀԼԻՄԵՆԵԿԸՆ ԴԵՂԿԵԼՓՈՒՆՔ

ԳԵՂԵՅԿԵՅՈՒՆՈՂ ՄԼՔՐՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ ԴԵՂԿԵԼՓՈՒԹ, ՄԻՇՏ ԴԵՂՐՄ:

Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշի-ներէ: Եռաջին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խիղճն որ երեսը, վեղը, թեւերը և ձեռուրները պիտի առ-նուն անոյշ փափկութիւն մը և մարմարիտի փայլ հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ: Սպարնի գողոնի յատկութիւնները կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւեքը, երեսի և ձեռքի ցանկերը, արեւոյ-րուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուել թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի գեղագործներու քով:

Կ, գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց: Էսթրա Քարուան, Անգլիական միջերանոց, Եիւրօք Գալալըրմ. և Բզի-տօր Լազանտէլլա 435, Բերա Մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒՄ

ՄԼԷԼՐՈՋ

ՄԼՔԵՐՈՒ ՄԻՂ ՀԵՏԻՆ ՆՈՐՈԳԻՈՂ

Խրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմկած կամ գունաթափ մաղերը: Կը դադրեցունէ անոնց թափելը: Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թերի, ու մաղերուն նոր կեանք, աճում, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa lpton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիու Եօրք:

Կ, գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց: Էսթրա Քարուան, Անգլիական միջերանոց, Եիւրօք Գալալըրմ. և Ի-զիտօր Լազանտէլլա 435, Բերա Մեծ փողոց: